ՄԱՀ ԲԱՐՍԵՂ ԹԱՇՉՅԱՆԻ
(1919—1980)

Մայիսի 13-ին, երեքշաբթի օրը, հանկարծամահ եղավ Մայր Աթոռին առընթեր Վերստուգիչ հանձնաժողովի անդամ և հոգևոր ճեմարանի դասախոս ու թղթակցությունների քարտուղար Բարսեղ Թաշչյանը:

Հանգուցյալը ծնվել է 1919 թվականի օգոստոսի 20-ին Կահիրեում (Եգիպտոս), բնիկ կեսարացի ծնողների ընտանիքում: Նախնական կրթությունը ստացել է Կահիրեի Գալուստյան Ազգային վարժարանում, որն ավարտել է 1934 թվականին և նվիրվել կրթական-հասարակական գործունեության: Հետագա տարիներին նա ինքնազարգացմամբ հարստացրել է իր գիտելիքները:

1951—1964 թվականներին պատասխանատու աշխատանքներ է կատարել Կահիրեի Ազգային առաջնորդարանում՝ որպես ընդհանուր քարտուղար:

Հանգուցյալը ջերմ սիրով զբաղվել է մանավանդ հայ ժողովրդի պատմության ուսումնասիրությամբ: 1950 թվականին Կահիրեում լույս է տեսնում նրա երկար տարիների աշխատանքների և պրպտումների արգասիքը հանդիսացող և 550 էջերից բաղկացած «Արշակունի Հայաստանի հազարամյա փառքը» երկասիրությունը:

1964 թվականի սեպտեմբերին, որպես հայրենասեր մարդ, ընտանիքով՝ կնոջ ու երկու երեխաների հետ հայրենադարձվում է Սովետական Հայաստան:

1966 թվականի հուլիսից սկսած աշխատանքի է անցնում Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանում, որպես ընդհանուր պատմության ու աշխարհագրության դասախոս ու այդ պաշտոնում մնում մինչև իր կյանքի վերջին օրը:

Որտեղ էլ որ աշխատելիս է եղել Բարսեղ Թաշչյանը, եղել է իր գործին նվիրված անձ ու բարեխիղճ աշխատող:

Հանգուցյալի հուղարկավորությունը կատարվում է մայիսի 15-ին, հինգշաբթի օրը: Տան և թաղման կարգը կատարում է հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյանը՝ շրջապատված հոգևոր ճեմարանի ուսանողներով:

Բարսեղ Թաշչյանը բարեջան, ազնիվ անձնավորություն էր, սիրված և հարգված բոլորի կողմից:

Հարգա՜նք նրա հիշատակին: